

Արձանագրություն թիվ 3

ԵՊՀ-ի Քիմիայի ֆակուլտետի գիտական խորհրդի նիստի,  
կայացած 2021թ նոյեմբերի 29-ին

Օրակարգը՝

1. Մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաների քննարկում և հաստատում:

2. Ամբիոնների վարիչների հաղորդումը հետազոտական բաղադրիչ ունեցող առարկաների աշխատանքների ընթացքի վերաբերյալ:

3. Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչի հաղորդումը առաջին կուրսեցիների հետ տարվող աշխատանքների մասին:

4. Մագիստրոսական թեզերի ընթացքի վերաբերյալ ամբիոնի վարիչների հաշվետվությունը:

5. Ընթացիկ հարցեր:

1.Խորհրդի նախագահ Ս. Վ. Ղռչիկյան.

- Հարգելի գործընկերներ ֆակուլտետի գիտխորհրդի 16 անդամներից ներկա են 15 հետևաբար կարող ենք սկսել մեր աշխատանքը: Ներկայացնեմ այսօր մեր նիստում քննարկվող հարցերը: Այսօր մեր նիստը կսկսենք ընթացիկ հարցերից: Լսելու ենք օրգանական քիմիայի ամբիոնի հայցորդ Միրաքյան Նադարշին: Ատենախոսությունը լսվել է օրգանական քիմիայի ամբիոնում, և ամբիոնը դիմել է գիտխորհրդին հետագա ընթացքի համար: Այսպես ատենախոսության վերնագիրն է “Պոլիանիլինի նման կառուցվածք ունեցող և օլիգոանիլինային ֆրագմենտ պարունակող որոշ պոլիմերների սինթեզը և ուսումնասիրությունը”:

Ելույթ ունեցով օրգանական քիմիայի ամբիոնի հայցորդ Ն.Ա.Միրաքյանը: Ելույթից հետո հայցորդին հարցեր ուղղեցին պրոֆեսորներ Հ.Գ.Խաչատրյանը, Ս.Վ.Ղռչիկյանը, Ռ.Ս.Հարությունյանը, Կ.Ռ.Գրիգորյանը, դոցենտներ՝ Ա.Ի.Մարտիրոսյանը և Ա.Ի.Ալեքսանյանը:

Ելույթ ունեցով պաշտոնական գրախոս դոցենտ Ա.Ս.Գալստյանը: Նա նշեց, որ հայցորդի կողմից կատարվել մեծածավալ գիտական աշխատանք, և այդ աշխատանքը բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի պահանջներին: Աշխատանքը ամբողջությամբ արտացոլվում է հրատարակված հոդվածներում և միջազգային թեզիսներում: Պաշտոնական գրախոսը նշեց նաև, որ աշխատանքում նկատվել են որոշակի անճշտություններ, որոնք հեղինակը անմիջապես ուղղել է և աշխատանքը կարելի է ներկայացնել պաշտպանության:

– Երևանի պետական համալսարանի քիմիայի ֆակուլտետի գիտական խորհուրդը որոշեց Նադարշ Արթուրի Միրաքյանի “Պոլիանիլինի նման կառուցվածք ունեցող և օլիգոանիլինային ֆրագմենտ պարունակող որոշ պոլիմերների սինթեզը և ուսումնասիրությունը” թեկնածուական ատենախոսական աշխատանքը ներկայացնել հրապարակային պաշտպանության՝ քիմիական գիտությունների դոկտորի և թեկնածուի գիտական աստիճաններ շնորհող ՀՀ ԲՈՀ-ի ֆիզիկական քիմիայի 010 Մասնագիտական խորհրդին՝ Բ.00.06 “Բարձրամոլեկուլային միացություններ” մասնագիտության գծով քիմիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

Որոշումն ընդունվել է միաձայն:

- Տ.Վ.Ղոչիկյան, - Անցնենք օրակարգի առաջին հարցին՝ մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների թեմաների քննարկում և հաստատում: Ըստ էության թեմաների քննարկումը կատարվում է ամբիոններում, մենք այստեղ միայն հաստատում ենք թեմաները:

Ամբիոնի վարիչները նշեցի, որ թեմաների փոփոխություններ չեն եղել: Ավարտական աշխատանքները ընթանում են նորմալ հունով և պատրաստ կլինեն պաշտպանությանը: Մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանողները սկսել են աշխատանքները և քանի որ նրանք դեռ ունեն 1 տարի(մագիստրատուրա 1,5 տարի), ապա փոփոխությունների դեպքում կներկայացվեն ավելի ուշ:

Տ.Վ.Ղոչիկյան -Ամբիոնների վարիչները ներկայացնեն հետազոտական բաղադրիչ ունեցող առարկաների աշխատանքների ընթացքի վերաբերյալ:

Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչ, դոցենտ Ա.Բ.Մարտիրյան

Այս կիսամյակում հետազոտական բաղադրիչ ունեցող առարկաների աշխատանքներն իրականացվում են միայն մեր ամբիոնում: Աշխատանքները կատարվում են և ուսանողները իրենց ավարտուն աշխատանքները կներկայացնեն երկրորդ ընթացիկ քննաշրջանում:

Ա.Բ.Մարտիրյանը ներկայացրեց նաև առաջին կուրսեցիների հետ տարվող աշխատանքները: Նա նշեց մտահոգված է բացակայություններով, սակայն այն բացատրվում տղաների գորակոչման գործընթացով: Ա.Բ.Մարտիրյանը նշեց, որ մտահոգիչ է նաև այն փաստը, որ ուսանողը գորակոչվում է հենց առաջին կուրսից հետևաբար չի հասցնում կայանալ որպես ուսանող և գորացրվելուց հետո էլ դժվար է ուսանողական պահանջներին հարմարվում: Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ Ն.Ա.Դուրգարյան – Պետք է այս հարցը հնարավորինս շատ բարձրաձայնել, քանզի ակնհայտ է, որ գորակոչման այս տարբերակը վատ է անդրադառնում երիտասարդների ուսումնառության որակի վրա:

Նիստի նախագահ Տ.Վ.Ղոչիկյան – Այժմ անցնեք մագիստրոսական աշխատանքների պաշտպանության հարցին: Ինչ վիճակում են գտնվում աշխատանքները: Զգուշացնեմ որ նախապաշտպանությունը պետք իրականացնել հունվարի 10-ից 15-ի միջակայքում:

-Օրգանական քիմիայի ամբիոնի վարիչ- Ն.Ա.Դուրգարյան. Մեր ամբիոնում մագիստրոսական թեզ իրականացնում է մեկ ուսանող քիմիա բաժնից: Աշխատանքները ընթանում են նորմալ;

-Անօրգանական և անալիտիկ քիմիայի ամբիոնի վարիչ- Ա.Բ.Մարտիրյան. Մեր ամբիոնում իրականացվում է 4 ուսանող, որոնցից մեկը իր մագիստրոսական թեզը իրականացնում է արտերկրում: Գ.Առաքելյանի աշխատանքները ընթանում են

նորմալ և նա հեռահար տարբերակով կմասնակցի մագիստրոսական թեզի պաշտպանությանը:

-Ֆիզիկական և կոլոիդ քիմիայի ամբիոնի վարիչ – Շ.Ա.Մարգարյան. Մեր ամբիոնում մագիստրոսական թեզ է իրականացնում մեկ ուսանող, աշխատանքները ընթանում են նորմալ հունով: Այժմ իրականացվում է ձևակերպման գործընթացը:

Քիմիայի ֆակուլտետի դեկան, պրոֆեսոր Տ.Վ.Ղռչիկյան

Հարգելի գործընկերներ դեկանի տարեկան հաշվետվությունը այս տարի տեղի է ունենալու դեկտեմբերի 8-ին, ժամը 14:30-ին: Սա խորհրդի ընդլայնված նիստ է, կարող են ներկա լինել ինչպես դասախոսական կազմը, այնպես էլ ուսանողները:

Ֆակուլտետի գիտական

Խորհրդի նախագահ, պրոֆեսոր

Տ.Վ.Ղռչիկյան

Գիտ.խորհրդի

քարտուղար, դոցենտ

Մ.Ա.Սամվելյան